

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՑՅԱԼ ՂԵՐԲԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՈՒՋ

Ա. Ռ. ԳԱԳԻՆՅԱՆ

Հայտնի է, որ հին հայերենի անցյալ դերբայը հետագայում հանդես է եկել որպես վերլուծական ժամանակաձևերի կազմման միջոց: Ինչպես բոլոր վերլուծական ձևերի բաղադրիչները, այն նույնպես անցել է զարգացման որոշակի ուղի; որը պայմանավորված է առաջին հերթին հենց այդ դերբայի բովանդակությամբ: Նշենք, որ վերլուծական ձևերի զարգացումը լեզվում պայմանավորված է կամ նոր քերականական իմաստի ի հայտ գալով, կամ հինը նորով փոխարինելու անհրաժեշտությամբ, քանի որ լեզուն գտնվում է անընդհատ փոփոխման գործընթացում: Ժամանակի ընթացքում նախկին ձևը սպառում է իրեն, և անհրաժեշտություն է առաջանում ստեղծելու նորը: Ընդ որում, քերականական այս կամ այն իմաստը, որպես կանոն, լեզուներում ունենում է միևնույն զարգացումը: Արդի հայերենի վաղակատար ներկա և անցյալ ժամանակները, որոնք կազմվում են վաղակատար դերբայից, այսինքն՝ անցյալ դերբայի զարգացման վիճակից, ունեն ավարտվածության (պերֆեկտային) իմաստ: Պետք է ենթադրել, որ այս ժամանակաձևը (խոսքն այստեղ վերաբերում է վաղակատար ներկային) ունեցել է կերպից ժամանակի անցման իմաստային նույն զարգացումը, ինչ հնդեվրոպականի աորիստը: Ուշագրավ է, որ հին հայերենի անցյալ դերբայը կազմված է հենց աորիստի հիմքից: Հին հայերենի անցյալ դերբայի զարգացման ուղին ակներև է այնպիսի կառույցում, ինչպիսին անցյալ դերբայ + սեռական կամ ուղղական հոլովով ենթակա կառույցն է: Ընդ որում, սեռական հոլովով ենթական գերիշխում է հիմնականում անցողական բայերի հետ, իսկ ուղղականը՝ անանցողական¹:

Օր.² *Նորա գործեալ է զգործ: Նա եկեալ է:*

Ի դեպ, համանման հակադրությունն առկա է նաև էրգատիվ լեզուներում: Միակ տարբերությունն այն է, որ եթե հայերենում անցողական բայի խնդիրը դրված է հայցական հոլովով, ապա էրգատիվ լեզուներում՝ բացարձակ հոլովով:

Ընդ որում, եթե անանցողական բայերի հետ անցյալ դերբայը գործածվում է հանգույցով, ապա անցողական բայերի դեպքում՝ հաճախ առանց հանգույցի:

Հին հայերենի այս կառույցի ծագման և բնույթի շուրջ կան տարբեր կարծիքներ: Եթե փորձենք ի մի բերել դրանցում առկա այն դրույթները, որոնք մեզ համոզիչ են թվում, ապա կարող ենք հիշատակել հետևյալները.

1. Անցյալ դերբայի հիմքը սեռային առումով չեզոք է (Է. Բենվեճիստ, Վ. Շմալստիգ, Յ. Վայտենբերգ և Է. Թումանյան³, Կ. Շմիդտ*):

¹ Հմմտ. **H. Jensen**, Altarmenische Grammatik, Heidelberg, 1959, էջ 133-134:

² Տե՛ս **E. Benveniste**, La construction passive du verbe transitif, BSL, 48, 1952, էջ 52-62: **W. R. Schmalstieg**, A syntactic comparison of old Armenian and Lithuanian: The case of the passive participles, Միջազգային հայերենագիտական գիտաժողովի զեկուցումներ, Եր., 1984, էջ 142, **J. Weitenberg**, Infinitive and participle in Armenian, AAL, vol. 7, 1986, էջ 18-20, **Э. Г. Туманян**, Существует ли эргатив в индоевропейских языках? "Proceedings of the eleventh international congress of linguistics, Bologna — Florence, 2, 1972", էջ 959-960:

* Տասնմեկերորդ միջազգային լեզվաբանական գիտաժողովում Է. Թումանյանի զեկուցումին հաջորդած քննարկմանը կարծիք է հայտնել Կ. Շմիդտը, որի մասին է տե՛ս **Э. Г. Туманян**, նշվ. աշխ., էջ 957-960:

2. Անցյալ դերբայը նախապես հանդես է եկել որոշի գործառույթով (Ռ. Շտեմպել³):

3. Սեռական հոլովով այս կառույցը պոստիվ է, ունի խոր արմատներ և արդյունք է ցիկլային զարգացման (Մ. Սախոկիա⁴):

4. Այս կառույցը անցումային է (Կ. Շմիդտ⁵):

5. *Ունենալ*-ով շրջասության և հնդեվրոպականի նկարագրական պերֆեկտի հիմնական կառույցն է (Է. Բենվեհիստ, Մ. Սախոկիա⁶):

Սակայն կան հարցեր, որոնք պատշաճ ուշադրության չեն արժանացել հիշյալ տեսություններում կամ էլ ենթակա են ճշգրտման: Այսպես, լիովին պարզ չէ, թե

1. ո՞րն է հանգույցի բացակայության պատճառը,

2. ո՞րն է հայցականով խնդրի բնույթը,

3. այդ կառույցը նախահնդեվրոպական շրջանից եկող վերապրու՞մ է, թե՞ հետագայում ի հայտ եկած երևույթ,

4. ինչու՞ է անցյալ դերբայով այս կառույցը հիմնականում գործածվում երրորդ դեմքի համար:

Հանգույցի բացակայությունը հատուկ է հնդեվրոպական անվանական նախադասություններին: Հանգույցի նախնական բացակայությունը հուշում է, որ բաժանականը հանդես է գալիս ստորոգման գործառույթով: Այսինքն՝ ենթակայի միջոցով արտահայտվում են դեմքի և թվի քերականական կարգերը, իսկ ստորոգյալի միջոցով՝ ժամանակային հարաբերությունը: Վերջինս բխում է հենց անցյալ դերբայի հիմքի, այսինքն՝ աորիստի իմաստից: Ընդ որում, հնագույն վկայություններում անցյալ դերբայը առանց հանգույցի է հանդես գալիս ոչ միայն անցողական, այլև անանցողական բայերի հետ: Կառույցի այդպիսի անհանգույց դրսևորումները բնորոշ են հատկապես հայ ժողովրդական հին բանահյուսությանը, օր.՝

Հատուած գնացեալ Վարդգէս Մանուկն... (անանցողական),

Ճաշ գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի... (անցողական),

ինչպես նաև Կորյունի ոճին: Եվ դա բնական է, քանզի Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը հին հայերենի գրական առաջին հուշարձաններից է: Օրինակ՝

Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դունն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասատր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւմայ ուրումն (անանցողական):

Իսկ Հաբէլին գայն լուեալ փութանակի հասաներ առ Դանիէլն ... (անցողական):

Ավելի ուշ շրջանի գրական հուշարձաններում արդեն նկատվում է անցողականի և անանցողականի վերոհիշյալ հակադրությունը, այսինքն՝ անանցողական բայերի հետ հանգույցը գործածվում է, իսկ անցողականների հետ՝ հիմնականում ոչ: Այստեղից հետևում է, որ հանգույցը նախապես հանդես է եկել անանցողական

³ Տե՛ս R. Stempel, Die infiniten Verbalformen des Armenischen, Frankfurt am Main, Bern, New-York, 1983, էջ 84-85:

⁴ Տե՛ս М. М. Сахокия, Посессивные конструкции и эргативность древнеармянского языка в свете проблем синтаксической типологии, Մյուշագային հայերենագիտական գիտաժողովի զեկուցումներ, Եր., 1984, էջ 499-507:

⁵ Տե՛ս Э. Г. Туманян, նշվ. աշխ., էջ 959-960:

⁶ Տե՛ս E. Benveniste, նշվ. աշխ., М. М. Сахокия, նշվ. աշխ.:

⁷ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1981, (II, ԿԵ), էջ 240, (I, L), էջ 100:

⁸ Կորիւն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Եր., 1994, էջ 87-88:

բայերի հետ, այնուհետև անցողականի: Սրա մասին է վկայում նաև մի կողմից *ես* հանգույցի, մյուս կողմից՝ անցյալ դերբայի բովանդակությունը: Այսպես, ըստ Բենվենիստի, *ես* բայը վիճակի բայ է, որի իմաստներն են «գոյություն ունենալ, իրականությանը պատկանել»⁹: Ընդ որում, *ես* բայի արտահայտած վիճակի իմաստը վերաբերում է գոյություն ունեցողին, նրան, ով ինքնին ինչ-որ բան է ներկայացնում, ի տարբերություն *ունենալ* բայի արտահայտած վիճակի իմաստի, որը վերաբերում է ինչ-որ բան ունեցողին: Այսինքն՝ եթե *ես* բայը նույնականության ներքին հարաբերությունն է արտահայտում, ապա *ունենալ* բայի արտահայտած իմաստը պատկանելությունն է¹⁰:

Ինչ վերաբերում է անցյալ դերբայի բովանդակությանը, ապա պետք է հիշել, որ այն սերում է աորիստի հիմքից¹¹: Իսկ աորիստի հիմքի նշանակությունը գործողությունն է որպես փաստ կամ գործողության ավարտվածությունը¹²: Այստեղից էլ բխում է անցյալ դերբայի սեռային առումով չեզոքությունը:

Նշենք, որ *-եսլ* մասնիկն ընդհանուր է բոլոր սեռերի համար: Ընդ որում, ներգործական սեռի բայերը առանց ձևական փոփոխության անցյալ դերբայում կարող են արտահայտել ներգործական և կրավորական սեռի նշանակություն, այսպես՝ *գրեսլ = գրել, գրվել, գրած, գրված*: Իսկ չեզոք սեռի բայերը միայն չեզոք սեռի իմաստ են արտահայտում, օրինակ՝ *հասեսլ = հասել, հասած, անցեսլ = անցել, անցած*¹³:

Այս է պատճառը, որ սեռային հակադրությունը իրենց վրա են վերցնում ենթակայի հոլովները: Այսպես, ուղղականով ենթական գործածվում է անանցողականի և կրավորական սեռի համար: Օրինակ՝

... ունն նատարկեսլ շրջի վասն ոսկոյ, եւ ոմն սպանանի վասն նորին. դարձեսլ նոյն բռնութիւն գոմն ընչաւէտ արար եւ գոմն սպանող ¹⁴ (անանցողական):
Եվ թե այս ամենայն պահեսլ էր ի գանձի իմում ¹⁵ (կրավորական):

Ներգործական իմաստի արտահայտման համար ուղղականով ենթական վերածվում է սեռականով ենթակայի: Հիշենք, որ գրաբարին հատուկ է անանցողական բայի իմաստը ներգործականի վերածել՝ ենթական սեռական հոլովով դնելու միջոցով՝

Է իս եղբայր մի, որը նույնիմաստ է Ես մի եղբայր ունեն նախադասությանը¹⁶:

Իսկ եթե նախադասությունը անենթակա է, ապա այստեղ իր դերն է կատարում *q* ցուցիչը: Ինչպես նշում է Բենվենիստը, *բայածական + ես* կառույցի վիճակի իմաստն այնքան ուժեղ է, որ ենթակայի բացակայության դեպքում *q* ցուցիչի առկայությունն է որոշում, թե տվյալ նախադասությունը ներգործական, թե կրավորական սեռի է¹⁷:

⁹ Տե՛ս Զ. Бенвенист, Глаголы „быть“ и „иметь“ и их функции в языке, Общая лингвистика, М., 1974, էջ 204, 214:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 214:

¹¹ Հմմտ. L. Mariés, Sur la formation de l'aoriste et des subjonctifs en -c- (-s-)en arménien, REA, 1930, t. X, fasc. 2.

¹² Տե՛ս А. Н. Савченко, Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, էջ 276:

¹³ Տե՛ս Ա. Ա. Արրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1964, էջ 161:

¹⁴ Զովհան Ոսկերեթան, Մեկնութիւն սուրբ գրոց (հատվածներ): Հայոց լեզվի պատմության քրեատմատիա: Գրաբար և միջին հայերեն, Եր., 1987, էջ 26:

¹⁵ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 201:

¹⁶ Տե՛ս Ա. Ա. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 218:

¹⁷ Տե՛ս Զ. Бенвенист, նշվ. աշխ., էջ 219-220:

Այսինքն՝ հին հայերենի անցյալ դերբայը, ինքնին ունենալով վիճակի իմաստ, երկրորդաբար այդ իմաստը ստանում է **ես** հանգույցի ավելացմամբ: Իսկ վիճակի իմաստն ընկած է առաջին հերթին անանցողական բայերի հիմքում, քանի որ ինչպես Սավչենկոն է նկատում, անանցողական բայի արտահայտած նախնական իմաստը վիճակի իմաստն է¹⁸: Այդ է վկայում դեռևս Դեսնիցկայայի կողմից նկատված օրինաչափությունը հին հունարենում, որի համաձայն ներկայի հիմքը, եթե այն հանդես չի գալիս խնդրի հետ միասին, արտահայտում է նշված գործողության վիճակի իմաստը, ընդ որում աորիստի և պերֆեկտի հիմքերի համար այդ «վիճակի» իմաստը գերիշխող է: Այս նախնական անանցողականությունը տարբերվում էր հետագա անցողականից նրանով, որ ներունակ էր անցողականի վերածվելու, որն էլ իր հերթին կապված է հայցական հոլովի զարգացման հետ¹⁹:

Հայերենում, ինչպես տեսնում ենք, այդ անանցողականությունը, այսինքն՝ անցյալ դերբայի արտահայտած վիճակի իմաստը, անցողականի է վերածվել ենթական սեռական հոլովով դնելու միջոցով:

Իսկ **ես** հանգույցի առկայությունը ներգործական իմաստի արտահայտման համար պետք է որ տեղին չլինի, եթե հաշվի առնենք այդ հանգույցի բովանդակությունը, այսինքն՝ նույնականության և ոչ թե պատկանելության իմաստը: Ինչպես արդեն նշվեց, պատկանելության իմաստը, որից և բխում է այս կառույցի ներգործական իմաստը, արդեն արտահայտվում է ենթական սեռական հոլովով դնելու դեպքում: Մյուս կողմից՝ հանգույցի բացակայությունը անցողական բայերի մոտ, կարծում ենք, վկայում է այն մասին, որ հայցական հոլովով դրված գոյականը նախապես որպես ուղիղ խնդիր հանդես չի եկել:

Սա էլ կրկնում է հնդեվրոպական հայցականի զարգացումը, քանի որ, ինչպես հավաստում է Դեսնիցկայան, հայցականը նախորդել է անցողականության կարգին և ծագումնաբանորեն կապված է անորոշ հոլովի հետ, այսինքն՝ հոլովական ձևավորում չունեցող և իրադրական բնույթ ունեցող լայն և ոչ հստակ գործառույթներով օժտված ձևի հետ²⁰: Քանի որ անցողականության կարգն էլ կապված է էրգատիվ կառույցի առաջացման հետ²¹, ապա ազատ հայցականը պետք է վերագրել նախաէրգատիվ շրջանին, այսինքն՝ ակտիվին:

Վերադառնալով հայերենին՝ ավելացնենք, որ ազատ հայցականը ավելի ուշ աստիճանաբար վերածվել է ուղիղ խնդրի հայցականի, որի արդյունքում **զ** ցուցիչը քերականացվել է որպես հայցականի ցուցիչ: Այս է վկայում այն փաստը, որ հայերենի որոշյալ հայցականի **զ** ցուցիչը նախապես այդ իմաստը չի կրել: Այն մասին, որ **զ** նախդիրը որոշակիություն է արտահայտել արդեն հայերենի գրավոր արձանագրման ժամանակ, խոսել է դեռևս Ա. Մեյեն և նրա հնագույն իմաստը համարել «նկատմամբ, հարաբերությամբ, վերաբերությամբ»²²: Ջահուկյանը, փորձելով այն ներկայացնել իր համընդհանուր լեզվաբանական կաղապարի տերմիններով, եզրակացնում է, որ այդտեղ առկա է կախման կարգի դրսևորումներից մեկը՝ ուղիղ խնդիրը հանդես է գալիս որպես կախյալ առարկա, և **զ**-ն հանդես է

¹⁸ Հմմտ. А. Н. Савченко, նշվ. աշխ., էջ 366:

¹⁹ Տե՛ս А. В. Десницкая, Из истории развития категории глагольной переходности, «Памяти академика Я. В. Щербы», Л., 1951, էջ 141:

²⁰ Տե՛ս А. В. Десницкая, О происхождении винительного падежа в индоевропейских языках, «Сравнительное языкознание и история языков», Ленинград, 1984, էջ 72:

²¹ Հմմտ. Г. А. Климов, Типология языков активного строя, М., 1977, էջ 291:

²² Տե՛ս Ա. Մեյեն, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 143:

գալիս որպես այդ կախման ընդհանուր արտահայտիչ²³: Այս նախդիրի լայն գործառնությունների մասին են վկայում տարբեր հոլովների հետ նրա գործածությունները²⁴: Ըստ Գ. Մանուկյանի, *զ*-ի հայցականով արտահայտած իմաստներից մեկն էլ որոշակիության իմաստն է²⁵, որն էլ, կարծում ենք, գործել է նաև այս կառույցի նախնական իմաստային համատեքստում:

Ինչ վերաբերում է հիշյալ կառույցի վաղեմությանը, ապա որոշ հեղինակներ, ինչպես օրինակ՝ Կ. Շմիդտը, **Նորա գործեալ է* կառույցը ներգրավում են նախահնդեվրոպական բայի վերականգնման համակարգում²⁶: Իսկ Է. Մակաևը, նշելով այն փաստը, որ հին հայերենը ունի *սեռական հոլով + լինել* կառույցը, ի տարբերություն հին հնդեվրոպական լեզուների, որոնք ունեն *dativus possessivus + լինել* կառույցը, և չի գործածում *ունենալ* բայը պերֆեկտային շրջասական կառույցում, հայերենի բայական հարացույցում նկատում է համահնդեվրոպական մոդելավորման արխաիկ գծերի կոնսերվացիա²⁷:

Սակայն մենք հակված ենք այս կառույցը համարելու ավելի ուշ ի հայտ եկած երևույթ, որի զարգացումը պարզապես ունի տիպաբանական որոշ ընդհանրություններ նախահնդեվրոպական շրջանի դիմավոր բայի զարգացման հետ:

Այսպես, հնդեվրոպականի նախնական փուլերի համար վերականգնվում է ակտիվ կառույցը, որին հատուկ է բայի ակտիվի և ստատիվի հակադրությունը: Ընդ որում, եթե ակտիվին հատուկ է գործողությունը, ապա ստատիվին՝ վիճակը: Իսկ հոլովական հարացույցում ակտիվ հոլովը հակադրվում է ինակտիվին: Ըստ Կլիմովի, ակտիվ հոլովը իրեն հատուկ հոլովական բնույթով արտահայտության պլանում հակադրվում է ինակտիվին, ինչպես հակադրության նշույթակիր անդամը ոչ նշույթակրին: Համանման է նրանց հակադրությունը բովանդակության պլանում, քանի որ ինակտիվ հոլովը հանդես է գալիս առավելագույն լայն գործառնությունների մերառյալ ակտիվ դասի (ստատիվ բայի դեպքում) ենթակայի ձևավորումը²⁸:

Այս երևույթը նկատել են նաև ավելի վաղ շրջանի հետազոտողները, օրինակ՝ Հ. Ուլենբեկը, Հ. Պեդերսենը և այլն: Ըստ նրանց, ակտիվ և պասիվ դասի ուղղական հոլովը նախահնդեվրոպականում ուներ տարբեր ձևեր: Ընդ որում, պասիվ դասի ուղղական հոլովի ձևը կատարում էր նաև հայցականի գործառնույթը, իսկ ակտիվ դասի ուղղականի ձևը՝ նաև սեռականի գործառնույթը²⁹: Այս տեսակետին է հարում նաև Ի. Տրոնսկին, որը համամիտ է, որ հնդեվրոպականի նախապատմական շրջանում անցողական բայերի հետ գործածվել է սեռականով ենթական, իսկ անանցողականի հետ՝ հիմնական ձևով, որը նույն ձևով հանդես է եկել նաև որպես խնդիր³⁰:

²³ Տե՛ս Գ. Բ. Չախուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 127:

²⁴ Տե՛ս նույն տեղը:

²⁵ Տե՛ս Գ. Մ. Մանուկյան, Գրաբարի նախդիրները և նրանց գործածությունը հայ պատմագրական երկերում (V-XI դարեր), Եր., 2002, էջ 90:

²⁶ Տե՛ս Մ. Մ. Сахокия, նշվ. աշխ., էջ 507:

²⁷ Տե՛ս Э. А. Макаев, Значение армянского языка для реконструкции общинно-доевропейского состояния, ИФЖ, 1967, 4, էջ 89:

²⁸ Տե՛ս Г. А. Климов, նշվ. աշխ., էջ 160:

²⁹ Հմմտ. А. Н. Савченко, Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, էջ 363, Н. К. Uhlenbeck, Agens und Patiens im Kasussystem der indogermanischen Sprachen. „Indogermanische Forschungen“, Bd. 12, 1901, Н. Pedersen, Neues und Nachtrdgliches, Zeitschrift für vergleichende Sprachforschung, Bd. 40, 1907, էջ 148-157:

³⁰ Տե՛ս И. М. Тронский, Общеиндоевропейское языковое состояние, Л., 1967, էջ 81-82:

Չուզահեռը կարելի է գտնել հին հայերենում: Իհարկե, հին հայերենում չկա ակտիվի և ինակտիվի դասը որպես այդպիսին, քանի որ հին հայերենը բնականաբար ակտիվ լեզու չէ: Սակայն հաշվի առնելով, որ վերոհիշյալ հակադրությունը կապված է շնչավորի և անշունչի հետ, և շնչավորը դիտելով որպես ակտիվ դաս՝ կարող ենք զուգահեռ տանել ակտիվ լեզուների հետ, քանի որ հին հայերենի հիշյալ կառույցի ենթական որպես կանոն շնչավոր է, և շնչավոր ենթակայով անանցողական բայերի դեպքում ենթակայի դերում հանդես է գալիս ուղղական հոլովը և ոչ թե սեռականը: Բացի այդ, հայերենում նույնպես ակտիվ իմաստը արտահայտության պլանում հակադրվում է ինակտիվին, ինչպես հակադրության նշույթակիր անդամը ոչ նշույթակրին՝ արտահայտվելով սեռական հոլովով:

Ակտիվ կառույցը Կլիմովը համարում է ածականի, ինչպես և բայածականի ինտենսիվ ձևավորման փուլը, որն իր ակունքներից մեկի միջոցով սերտ կապված է ստատիվ բայի հետ: Որպես ասվածի ապացույց նա բերում է ածականի և բայածականի նախատիպին բնորոշ հետադասությունը որոշյալի նկատմամբ, որը վկայում է նրա ստորոգական բնույթի մասին³¹:

Ինչպես գիտենք, գրաբարում ածականը գործածվել է և՛ նախադաս, և՛ հետադաս: Հետադաս ածականները հոլովով և թվով հիմնականում համաձայնվում են գոյականների հետ³²: Ընդ որում, այս կանոնը գործում էր նաև անցյալ դերբայի համար³³: Օրինակ՝

*Եվ վասն մարմնազգեցութեան Որդոյ այսպէս հաւատամք, զի առ յանձն լինել մարդ կարարեալ յաստուածածին Մարիամայ սրբով Հնգով*³⁴:

Եթե ընդունենք, որ հին հայերենում անցյալ դերբայը որպես բայածական կրկնել է դեռևս հնդեվրոպականի ակտիվ շրջանում ձևավորված բայածականի զարգացումը, ապա հայերենի բայածականն էլ կարելի է բխեցնել ստատիվից: Սա էլ համահունչ է Լյոնեի այն կարծիքին, որ անցյալ դերբայի անանցողական գործածումը նախնական է, իսկ անցողականն ածանցվում է նրանից³⁵: Նշենք, որ Բենվեդենիստը նույնպես այն կարծիքին է, որ լեզվում նախապես ի հայտ է գալիս անանցողականի պերֆեկտային ձևը և այնուհետև անցողականինը³⁶:

Սակայն այս բոլոր ընդհանրություններով հանդերձ մենք չենք կարող այս կառույցը բխեցնել նախահնդեվրոպական ակտիվ շրջանից, քանի որ.

1. Հայերենի այս կառույցը ունի անցողականի և անանցողականի հակադրությունը, որը սկզբունքորեն հատուկ չէ ակտիվ կառույցներին³⁷:

2. Արդեն հին հայերենում կար լավ զարգացած նոմինատիվ համակարգ, այսինքն՝ առկա էր ոչ միայն երգատիվ և նոմինատիվ կառույցներին բնորոշ անցողականի ու անանցողականի, այլև նոմինատիվ կառույցին հատուկ ուղղականի և հայցականի հակադրությունը³⁸, որով էլ պայմանավորված է սեռական, տրական հոլովների գոյությունը, որոնք կառուցվածքային տեսանկյունից անհամատեղելի են ակտիվի և ինակտիվի հակադրության հետ³⁹:

³¹ Տե՛ս Գ. Ա. Климов, նշվ. աշխ., էջ 310:

³² Տե՛ս Հ. Մ. Ավետիսյան, Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1992, էջ 143:

³³ Հմմտ. Հ. Մ. Ավետիսյան, Ռ. Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 100, R. Stempel, նշվ. աշխ., էջ 27:

³⁴ Սահակ Պարբե և Մեսրոպ Մաշտոց, Պատասխանի թրթոյն Պրոկոլի, Հայոց լեզվի պատմության քրեստոմատիա: Գրաբար և միջին հայերեն, Եր., 1987, էջ 15:

³⁵ Տե՛ս St. Lyonnet, Le parfait en arménien classique, Paris, 1933, էջ 68, 73:

³⁶ Տե՛ս Э. Бенвенист, Общая лингвистика, М., 1974, էջ 211-212:

³⁷ Հմմտ. Գ. Ա. Климов, նշվ. աշխ., էջ 291:

³⁸ Հմմտ. նույն տեղը, էջ 291:

³⁹ Հմմտ. նույն տեղը, էջ 215:

3. Այս կառույցի իմաստային համարժեքները այլ հնդեվրոպական լեզուներում նույնպես ոչ շրջանի գոյացում են, օրինակ՝ լատիներենի տրական հոլովով ենթակայով և est -ով կամ habeo -ով կազմված կառույցները և գերմաներենի պերֆեկտային ձևերը, որոնք կոչված էին փոխարինելու պերֆեկտային հին ձևերին⁴⁰:

4. Անցյալ դերբայի այս կառույցը նախահնդեվրոպական շրջանում չէր կարող ունենալ նույն գործառույթները: Ինչպես գիտենք, որա ցուցիչը նոստրատիկ ծագում ունի, որը, սակայն, այդ շրջանում եղել է ածականակերտ⁴¹: Ածականակերտ է նաև հնդեվրոպականի համար վերականգնված *-l ածանցը: Նշենք նաև, որ ընդհանուր հնդեվրոպական բայի անդեմ ձևերից ոչ մեկի համար էլ չեն վերականգնվում -l -ով դերբայական ձևերը, թեև առկա են շատ լեզուներում և որպես կանոն համարվում են տարբեր լեզուներում միաժամանակ զարգացած երևույթ⁴²: -l- ով ձևերը առանձին լեզուներում հանդես են գալիս նաև որպես բայի երրորդ դեմքի ցուցիչ, ինչպես օրինակ՝ ուրարտերենում:

Ըստ Մեյեի, սահմանական եղանակի երրորդ դեմքում բայը չի արտահայտում ոչ եղանակ, ոչ դեմք, ոչ ժամանակ, որի պատճառով հաճախ բայը բացակայում է այդ դեմքում⁴³: Մեր կարծիքով, սա է պատճառը, որ հաճախ բայի երրորդ դեմքի ցուցիչը համընկնում է անդեմ ձևերի ցուցիչի հետ: Օրինակ՝ -l-ով ձևերը ուրարտերենում, որոնք հանդես են գալիս որպես հոգնակի քվի երրորդ դեմքի կամ առարկաների քանակի ցուցիչ, Ջահուկյանը համարում է դերբայական ձևեր, որոնք գործածվում են դիմավոր ձևերին զուգահեռ կամ ընդհանրապես դերբայական ձևերի գործածությանը բնորոշ պայմաններում⁴⁴: Ըստ Իվանովի, խեթալուվական, սլավոնական լեզուների, թոխարերենի և հայերենի համար ընդհանուր *-lo- ով ձևերն ընդհանրապես նախապես եղել են անվանական կազմություններ, որոնք հետագայում մուտք են գործել բայական համակարգ⁴⁵:

Բայածականի և երրորդ դեմքի իմաստի ծագումնաբանական կապը նկատել է դեռևս Հիրաը: Այս տեսակետին է հարում նաև Սավչենկոն, որը երրորդ դեմքի ցուցիչը բխեցնում է բայածականից⁴⁶: Կարծում ենք, որ *հալ-* ով անցյալ դերբայի՝ հիմնականում երրորդ դեմքի համար գործածվելը⁴⁷ բխում է վերոհիշյալ պատճառից: Այսինքն՝ այստեղ նույնպես անցում է կատարվում անվանականից դեպի բայական համակարգ:

Այսպիսով, կարող ենք առաջ քաշել հետևյալ վարկածը.

Չին հայերենի սեռականով անցյալ դերբայը հանգում է աորիստի հիմքին, որն իր մեջ արդեն ունի գործողության ավարտվածության, վիճակի իմաստ և նախապես հանդես է եկել որպես որոշիչ: Անանցողական բայերի դեպքում անցյալ դերբայը որպես որոշիչ լրացնում է ենթակային, օրինակ՝ *Նա մեռեալ է* նշանակել է *նա մեռած է*:

⁴⁰ Հմմտ. Э. Бенвенист, Общая лингвистика, էջ 221-222:

⁴¹ Տե՛ս В. М. Иллич-Свитыч, Опыт сравнения ностратических языков, 2, М., 1976, էջ 20:

⁴² Տե՛ս Л. А. Сараджева, Об одной армяно-славяно-тохарской инновации, Ур-эшագային հայերենագիտական գիտաժողովի զեկուցումներ, Եր., 1984:

⁴³ Տե՛ս А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 360:

⁴⁴ Տե՛ս Г. Б. Джаукян, Урартский и индоевропейские языки, Ер., 1963, էջ 83:

⁴⁵ Տե՛ս В. В. Иванов, Тохарские языки, М., 1959, էջ 23:

⁴⁶ Տե՛ս А. Н. Савченко, Проблема происхождения личных окончаний глагола в индоевропейском языке, Ростов на Дону, 1960, *նույնի* Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, էջ 369:

⁴⁷ Հմմտ. Н. Jensen, նշվ. աշխ., էջ 135:

Այստեղ ենթական ուղղականով է, քանի որ անանցողական բայերը չեզոք են, և անցյալ դերբայի արտահայտած վիճակի իմաստը վերաբերում է ենթականին:

Իսկ *ճաշ գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի* նախադասությունը նախապես *ունենալ*-ով շրջասության մի տեսակ է եղել և նշանակել է *Արգաւանի պատրաստած ճաշը կամ Արգաւանը ճաշ ունի պատրաստած*:

Այնուհետև նախնական հատկացյալը վերածվել է ուղիղ խնդրի անանցողական բայերի համաբանական ազդեցության հետևանքով է հանգույցի ավելացման շնորհիվ, ինչպես հետևյալ օրինակում՝ *Չսլայն իսկ իմ աչօք տեսեալ է*⁴⁸: Ավելի ուշ սեռականով ենթական թերևս դարձյալ անանցողական բայերի համաբանական ազդեցության հետևանքով աստիճանաբար վերածվել է ուղղականով ենթականի, քանի որ այլևս չի արտահայտել նախնական իմաստը:

Այսպիսով, հարելով այն կարծիքին, որ բայածականի նախնական գործառույթը որոշի գործառույթն է, որը ածականից տարբերվում է նրանով, որ օժտված է ստորոգմամբ՝ կարծում ենք, որ ենթական սեռական հոլովով է դրվում ակտիվ իմաստ արտահայտելու համար, և բայածականն ինքնին ակտիվ իմաստ արտահայտել չի կարող: Անհանգույց անվանական նախադասությունը հանգույցի միջոցով վերածվում է հանգուցավոր նախադասության, որտեղ էլ նախապես լայն գործառույթներով օժտված հայցականը վերածվում է ուղիղ խնդրի գործառույթ կատարողի:

Ըստ էության, մենք ունենք ակտիվ կառույցից նոսրանախիլի անցման ուղու կրկնությունը, որն առհասարակ հնդեվրոպական լեզուներին բնորոշ վերլուծական պերֆեկտային ձևի կազմավորմանը հատուկ գործընթաց է:

А. Р. ГАГИНЯН – *О развитии причастия прошедшего времени древнеармянского языка.* – Причастие прошедшего времени, тесно связанное с конструкцией причастия прошедшего времени с подлежащим в родительном падеже, являясь производным от основы аориста, уже имеет смысл законченности, откуда и его нейтральность с точки зрения залога. Вследствие этого функцию выражения залоговой оппозиции берут на себя падежи подлежащего. Если подлежащее с нейтральным и страдательным залогами употребляется в именительном падеже, то для выражения значения активности подлежащее в именительном падеже преобразуется в подлежащее в родительном. Наблюдая некоторые типологические общности с развитием личного глагола праиндоевропейского периода, какими являются преобразование первоначальной непереходности в переходность посредством подлежащего в родительном падеже, переход свободного винительного в винительный прямого объекта и др., автор приходит к заключению, что данная конструкция повторяет путь перехода из актива в номинатив, что является характерным процессом образования аналитической перфектной формы для индоевропейских языков в целом.

⁴⁸ Եզնիկ Կողբացի, նշվ. աշխ., էջ 70: